

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ֆր.

Վեցամսեայ 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւր միկ ծրարով

Տարեկան 1 1/2 ֆր.

Վեցամսեայ 7 ֆր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօյր

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ո Ի Կ

Ծանոցման տողը
20 տանքիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction u journal

„Iraouunk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Iraouunk“

ВАРНА

Գրութիւնք եւ չեմ
տրուիր

ԱՍԵՐԻԿԱ

ԵՒ ԹՈՒՐԲԻԱ

(Շարունակաւ շարունակ եւ վերջ)

Գ. Թիւրքիոյ մէջ կրօնական կալուածները հարկ չունին իրենց վրայ: Ամերիկան ալ երբեմն կը վախճէր այս առանձնաշնորհումը, բայց վերջէն ամերիկեան կալուածներ անհատական, և ոչ թէ կրօնական նկատուելով, հարկի ենթարկուեցան: Կան շատ մը եկեղեցիներ, որոնք ֆէրմաններով հարկէ զերծ յայտարարուած են, այժմ պարտաւոր են տարեկան տուրք վճարել: Երբ միսիսիոններ բողոքած են այս անիրաւութեան դէմ, պատասխանուած է թէ՛ դուք օրինաւորապէս ճանչցուած չէք, թէ և ասոնք եօթնամասուն տարիներէ ի վեր գոյութիւն ունին Թիւրքիոյ մէջ, երբ ամերիկեան կալուածներէ տուրքեր սկսան պահանջել, ոչ միայն այդ տարիէն սկսեալ հարկ աւելն, այլ և ասան և հինգ տարիներու «յեաամնաց» հարկերը դանձեցին: Այսպէս, շատ մը կալուածներէ առնուած տուրքն արժէքին համահասար էր, ուրեմն միսիսիոններու համար վերստին գնում մըն էր այս:

Շատ անգամ ալ Ամերիկեան դպրոցներ ու եկեղեցիներ գոցած են, առարկելով թէ ֆէրման չունին: 1889 ին ամերիկեան լիազօրի միջոցաւ միսիսիոնական դպրոցներու ու եկեղեցիներու ցանկ մը ներկայացուեցաւ Բ. Դրան վաւերացնելու համար: Պատասխանն տարիներով ձգձգուեցաւ: Դամասկոսի վիրայէթէն ներկայացուած 53 դպրոցներու ցանկէն, կէսը միայն վաւերացուեցաւ, այն ալ եօթն տարիներու քաջութեան յետոյ: Պէյրութի նահանգին 60 դպրոցներէն և ոչ մին արտօնութիւն ստացաւ:

Այս բոլորը փաստեր են ապացուցանելու թէ՛ որքան գէշ կը

վարուին ամերիկացիներու հետ: ուրեմն ամերիկեան կառավարութեան կը մնայ ոյժով պահանջել՝ որ ամերիկեան շահերն ու հաստատութիւնները միեւնոյն հաւասար իրաւունքներն ունենան, ինչ որ միւս պետութիւններէն ունին:

Լոկ խոստումներու պէտք չէ հաւատ ընծայել: Խարգաւանք Թիւրքիոյ գիւնադատութիւնն է: Օրինակ՝ շատ անգամ դաւաճող իրաւունքներ կը զրկուին կուսակալներուն և հրահանգ կը տրուի ռանձգութիւններ ընելու, երբ ամիրներ յետոյ կը լսուի և գիւնադատներ բողոք կը ներկայացնեն Բ. Դրան, խոստում կը տրուի անմիջապէս հրահանգը կեղծ նահանգներն, որ բաւարարութիւն տրուի: Ու այսպէս պահ մը անիրաւութիւններ կը դադարին, բայց տարիներ յետոյ նոյն հրահանգները կրկին ի գործ կը դրուին, և երբ բողոքուի կառարկեն թէ այդ հինէն արդէն հաստատուած է, պէտք է, որ իրաւունքն հրատարակուած ատեն բողոք ներկայացուէր և փոփոխուէր: Հետեանք, նորէն բողոք, նորէն նոր հրահանգներ և այսպէս միշտ կրկնութիւն:

Միսիսիոններն ազգաբնակչութեան հետ դժգոհ են կառավարութեանէն և բողոքող այս բոլոր օտնձգութեանց ու անիրաւութեանց դէմ:

Գ. Քաղաքացիական հարց: 1868 ին Միացեալ Նահանգներու երեսփոխանական ժողովը հրատարակեց այն օրէնքը թէ՛ աւելն - մի աւելաւ ընկալա՝ ու ժառանգական իրաւունք ունի իր հայրենիքը փոխելու: Այդ է երկրին հիմնական սկզբունքը՝ մարգրն իրաւունք ունի՝ կեանքի, պատուութեան և երջանկութեան յետապնդման: Երկու տարի վերջ Միացեալ Նահանգներն Անգլիոյ հետ դաշնագրութիւն մը կնքեցին, որով իւրաքանչիւր երկրի բնակիչ՝ ազատ էր իր քաղաքացիութիւնը փոխել: Նոյն համաձայնութիւնն կայացած է և ուրիշ եւրոպական պետութեանց

հետ: Մինչ երեսուն տարի է որ Ամերիկա ճիգ կընէ նոյն առթիւ հասկացողութեան մը գալու Թիւրքիոյ հետ, բայց ի զուր, Թիւրքիա դեռ կը պահէ եւրոպական այն հին սովորութիւնը թէ՛ հպատակ մը իրաւունք չունի իր երկիրն փոխելու և ուրիշ պետութեան մը հպատակ կամ քաղաքացի ըլլալու:

Օսմանեան հպատակ մը, երբ իր հպատակութիւնն առանց կառավարութեան համաձայնութեան կը փոխէ, ընդ միշտ կը վտարուի երկրէն և իր կալուածներն ոչ թէ իր ժառանգներուն, այլ կառավարութեան կանցնին: Միեւնոյն օրէնքը գոյութիւն ունի այն մահմետականներու համար, որոնք Քրիստոնէութիւն կընդունին:

Անգլիական օրէնքը տարբեր է: Օտարական մը չի կրնար լիապէս անգլիական հպատակ դառնալ, մինչև որ նա իր նախկին պետութեան օրինաց համաձայն չը դադարի անոր հպատակ ճանչցուել: Այս, ի հարկէ, նշանակութիւն չունի Ամերիկայի համար, մինչ Թրանսսիյի, Կերմանիոյ Ռուսիոյ և Թիւրքիոյ համար որոշ օրինակներ խնդիր մըն է, իւրարու մէջ կնքուած դաշնագրութեանց հիմքերու վրայ: Միացեալ Նահանգներն օրինական կը համարեն քաղաքացիութիւնը փոխել և կրնդունին ամեն անհատի խնդիրն քաղաքացի ըլլալու համար ներքին ու տեղական օրէնքներու սահմանին մէջ, նոյն իրաւունքն տրուած է և Թիւրքիայի հպատակին համար: Թիւրքիա չի կրնար քաղաքացիութիւն կազմել:

1875 էն ի վեր գաղթային հասանք մը սկսած է Թիւրքիայէն Հայկական ջարդերէն յետոյ գաղթականներու թիւը ստուարացաւ և այսօր հարիւր հազարաւոր Թիւրքիացի գաղթականներ կան Ամերիկայի մէջ: 1900 էն առաջ գաղթականներու հարիւրին իննսուն և հինգ քրիստոնեաներ էին, որովհետեւ ասոնց մեկնումով Թիւրքիա բան

մը չէր կորսնցներ, ընդհակառակն աւելի գիւրութեամբ կը գանձէր թէ երթացողներու և թէ մնացողներու տուրքերն Ամերիկայէն զրկուած գրամներէն, այդ իր շահուն դէմ չէր նկատուել: Բայց նոր խնդիր մը բացուած է այժմ, վերջին քանի մը տարիներ մահմետականներն ալ սկսած են Ամերիկա գաղթել՝ զինուորական ծառայութենէ զերծ մնալու համար: Ուրիշ պատճառ մըն ալ, երկրի մէջ ժողովուրդն առհասարակ տնտեսապէս կը տառապի, տեղէ մը ուրիշ տեղ պանդխտութեան կը դիմեն, ութ տասն տարիներ շարաշար կաշխատին և հիւժուած ու մաշած՝ կը գառնան տուններին առանց ստակ մը շահած ըլլալու: Մինչ Միացեալ Նահանգներն իրենց համար արքայութիւն մըն է, հոն կը վազեն դրամ շահելու աղատութիւն վայելելու:

Այս գաղթականներէն մէկ երրորդն օտար երկրի մէջ պիտի մեռնին անսերունդ, մէկ երրորդը պիտի հաստատուին և մէկ երրորդը պիտի վերագառնան երկիր: Բայց բոլորն որ տնտէք մեռնին, հաստատուին, կամ վերագառնան միշտ ալ ծանր բարդութիւններ յառաջ պիտի գան Թիւրքիոյ և Ամերիկայի միջեւ:

Ընդհանրապէս Հայերն են, որոնք կը հաստատուին Ամերիկա և հոս կուզեն բերել իրենց կանայքն ու զաւակները, բայց Թիւրքիա չի թոյլատրեր, ուզելով զանոնք իբր պատանդ պահել: Ամերիկեան ներկայացուցիչի դիմումներն ալ պիտի առիթներով շատ անգամ մերժուած են:

Խոկ անոնք, որոնք Ամերիկայէն կը վերագառնան, չեն կրնար պաշտպանել իրենց քաղաքացիութեան իրաւունքը, Թիւրքիա զանոնք պարզապէս Ամերիկեան քաղաքացի չի ճանչնար: Աստիկ գէպքեր տեղի կուենան գրեթէ ամեն ամիս:

Այդ, Ամերիկեան կառավարութեան կը մնայ երկու ծայրայեղութիւններէն մէկին գիտել: Կամ այն է՝ իր երկրին հիմնա-

կան օրէնքը փոխել, և կամ թիւրքիա վերադարձող Արեւիկեան քաղաքացիներու իրաւունքը պաշտպանել:

Այս հարցը մղձաւանջ մըն է թիւրքիոյ համար, որովհետեւ եթէ ընդունի քաղաքացիական իրաւունքներ Արեւիկեա ու ամերիկեան քաղաքացիութեան պիտի դիմեն զինուորական ծառայութեանէ ազատութեան համար: Այս խանգարում յառաջ կը բերէ թիւրքիոյ կրօնական ու զինուորական կազմակերպութեանց մէջ, թիւրքն այդ չի ուտել և մինչև վերջին չունի պիտի մաքառէ:

Եթէ 1903 թուականի թիւրքիոյ և Ամերիկեան յարաբերութիւններն աչքի առաջ ունենանք պիտի տեսնենք թէ Ամերիկեան Պօլսի ներկայացուցչի հետ այնքան կոպտօրէն վարուած են, որ ոչ մի քաղաքակիրթ ազգի վայելչէ՛. Ամերիկեան թիւրքիայէն անխրաւաւ է չատ մը պարագաներու մէջ. արդեօք հիմա Սուլթանը պիտի ճանչնայ ամերիկայի իրաւունքները, պիտի վարուի թիւրքիա ապրող ամերիկացիներու հետ այնպէս՝ ինչպէս կը վարուի ուրիշ երկրացիներու հետ, պիտի ճանչնայ ամերիկեան քաղաքացիութիւնը, այդ է օրուան հարցը երկու պետութեանց մէջ:

«Ամերիկեան համբերութիւնը» կըսէ «Ամէրիկիւս» ամսակի կարգն անցած է, բայց մի անգամ որ բռնկի, պայթումէն աւելի բան մը կըլլայ:

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՕՆԳՐԻԱ

Գերմանիոյ նախանձն ու ատելութիւնը Անգլիոյ դէմ օրէ օր սաստկանալով վրայ է, նա ինչ ընելը չը գիտեր տեսնելով որ իր նախկին մրտերիմ բարեկամը Ռուսիան իրմէ հեռանալով Անգլիոյ հետ միաբանելու վրայ է Ասիական խնդրոց ինչ ինչ կ'տեսնու վրայ:

Միւս կողմէ գերմանական լրագիրքը

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ

ԿԱՐԻՊ ԱԽՊԵՐ...

(Շար. նախորդ թիւէն)

Ը

—Է՛հ, բաւ Գարբէլ Աղան, ուտել խմել ու բարեկամ ըլլալնիս մէկ կողմ, իսկ հաշիւներս գիտնալ մէկ կողմ: Եկո՛ւր նայինք ի՞նչ անցաւ ինչ դարձաւ... Կը տեսնե՞մ որ տեսարկը լեցուցեալ ու տեղ մը չը մնաց անոր: Գլուխս ծած հարցուցի. —Ի՞նչքան պարտք ունիմ, Երկար բարակ հաշիւը նայելէ ետքը, պատասխանեց. — 250 ոսկիի պահանջք մ'ունիմ գործի հարկին կրնամ քեզի հաստատել: Ի՞նչըսէք... Ի՞նչ առարկէք... կառավար-

չեն կրնար իրենց զայրոյթը զսպել անոր համար որ Ռուսիա՝ իրեն պէտք եղած թնդանթներուն եւ զէնքերուն գէթ մէկ մասը գերմանական գործարանաց ապաւորուել տեղ, ինչպէս ըրած էր միշտ, այժմ անգլիական գործարաններու մէջ շինել կուտայ: Բոյս կըսէ թէ՛ «այստ հետեւ Ռուսիոյ նաւային տեսչութիւնը նոր նաւերու շինութեան մի մասը եթէ իր զինակից ֆրանսային յանձնէ, ասոր բռնութիւնը չունինք, բայց եթէ միւս մասն այ ինչպէս կը գուշակենք Անգլիոյ յանձնէ, ասի բացէ ի բաց Գերմանիոյ դէմ մղուած թշնամական ցոյց մը պիտի համարենք»:

Գերմանիոյ ուրիշ մէկ տագնապն ալ այն է, որ Անգլիա հանդարտօրէն կը շարունակէ իր արշաւանքը դէպի Արաբիոյ խորերը, եւ քիչ տանէն տէր պիտի ըլլայ բովանդակ պարսկական ծովածոցին: Այս վերջին կէտը մանաւանդ շատ կը վրդովէ Գերմանացիները վասնզի գիտեն որ Անգլիոյ Պարսկական ծովածոցի գրաւումը իրենց շինած Պաղատաի երկաթուղւոյն մեծ վնասներ պիտի հասցունէ:

Կերեւի որ Անգլիայի բացի Պաղատաի գերմանական երկաթուղւոյ վնասելէ, կու գնն նաեւ վտանգ մը բխել Սուլթանին դէպի Մէքքէ շինել տուած երկաթուղւոյ գլխուն, վասնզի Անգլիա որչա՛տ է ի մօտոյ Սուլթէ ի Պասրա երկաթուղւոյ գիծ մը հաստատել, եւ անով ամենագործարար գիւրք մը բռնել այն կողմերը:

ՈՂՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՍՊԱՆՆԻՈՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ ԴԵՄ

Աւերի հեռուն պատմած ենք Սպանիոյ ալֆօնս թագաւորին եւ Էնա իշխանուհւոյն հարսանեաց պատկազրութեան հանդէսը, որ կատարուած էր մայիսի 18/31 ին առաւօտը Մատրիաի Ս. Կէրոնիմոսի եկեղեցւոյ մէջ:

Արդ՝ երբ Արքայական թափօրը եկեղեցիէն մեկնած պալատ կը վերադառնար, յանկարծ տունէ մը ծաղկազարդ Ռուսի նետուելով Արքայական կառքին դէմ, ժողովրդեան մէջ վայրկեան մը առաջ տիրած ուրախութիւնը տրտմութեան փոխեց եւ փողոցին սալայատակը մեռնողներու եւ վիրաւորեալներու արեամբ ներկեց:

Պատմե՛ք համառօտիւ այն կարճ տեղեկութիւնները որ այս ոճրագոր-

բութիւնն ա՛յն անյատակ անգունդն եղած էր, ուր ինկած էի ես ասորիջ ընտանիքովս ու գերդաստանովս: Ան ատեն տուի կնոջս անգին մտնեակը, մատանին... տուի գերդաստանին նըշանաբանն եղող մատանին ալ... տուի ջրարբի արտերս տուի պարտէզս, տուի մարգագետիններս ու բոլոր խտտոցներս: Անոնք թղուցի վախառուի խղճին ու կամքին եւ ըսի. — Դունքու Աստուած... ինչ որ կուզես հաշուէ՛: Առաւ գրիչն ու հաշուեց: Ենտոյ պահ մը մտածեց ու ըսաւ. — Այդ ամենուն երկու հարիւր ոսկի կըրնամ վճարել... հետեւաբար կը մնայ յիսուն ոսկի: Դողդաղով խնդրեցի որ այդ յիսուն ոսկիին պայմանաւած մը տայ: Քիթ բերանը ծովակելով երկու տարուան վրայ մեղհակ մը շինեց ու տոկոսը վրան բարդելով յիսունութը ոսկիի բարձրացուց: Ես վերադարձայ գիւղը: Բան մը չունէի: Ռէսուլթեան

ծուծեան վրայ հեռագիրները հաղորդած են արդէն:

Մայիս 11/24 ի օրը Մաթէօ Մօթան անուանով մէկը Մատրիաի Մայէր փողոցի թիւ 88 տան մէջ սենեակ մը կը վարձէ օրական 25 Բեսթայի: Այս սենեակը փողոցին վրայ էր եւ պատշգամ մը ունէր:

Մաթէօ Մօթան արքայական հարսանեաց տոստօտը կը պատուիրէ տանտիրոջ, որ իրեն համար ծաղկեփունջ մը ծախու առնէ, եւ յետոյ տկարութիւնն ունիմ ըսելով կը պատուիրէ որ մարդ զգայ զինքն անհանգիստ ընելու եւ սեւեկին մէջ կառնածնաւնայ:

Լրագրի ընթերցողը կը յիշեն, որ ասկէ գրեթէ 14 տարի առաջ Պրանսայի հասարակապետութեան Քարնօնախագահը Լիօնի մէջ սպաննող Իստալացի անարշիստը, աղերսագրի ձեւով ծալուած թուղթի մը մէջ պահած էր իր զաչոյնը եւ այնպէս զարկած:

Ասոր նման Մօնթանա ալ իր ուսմարտեղաւորեց առաւօտուն կապիւլ տուած ծաղկեփունջին մէջ, եւ երբ արքայական կառքը կանգնէր, չըջալայ տանց պատուհաններէն եւ պատշգամներէն նետուած անհամար ծաղկեփունջերուն հետ, ինքն ալ իր վտանգաւոր մահատու ծաղկեփունջը վար նետեց իր սենեակի պատշգամէն: Պայթումը տոկալի եղաւ. չփոթութիւնը տիրեց փողոցին մէջ, եւ Մօնթան այս խառնակութենէն օգուտ քաղելով կըրցաւ իսկոյն անյայտանալ:

Իօրնաքնելոս գուքոր իսկոյն նետուեցաւ կառքին վրայ, բացաւ դուռը եւ մի առ մի գրկելով զուրս հանեց կառքէն թագաւորն ու թագուհին որոնք ուրիշ կասքով մը գացին պալատ:

Կըսուի թէ անանուն նամակ մը 2—3 օր առաջ իմացուցեր էր Ալֆօնս թագաւորին որ այս ոճրագործութիւնը պիտի կատարուի:

Թագաւորն ու թագուհին այնչափ սարսափահար եղեր են, որ պալատի սանդուղէն վեր լալով ելեր են: Մինչեւ հիմայ հասած հեռագիրներուն նայելով սպաննուած են 13 զինուորականներն ու 11 քաղաքացիներ, իսկ վիրաւորեցող թիւն է 26 զինուորական ու 24 քաղաքացի: Արքայական կառքը բոլորովին փչրուեր է, եւ հրաշք մէ եղած որ թագաւորն ու թագուհին չեն իսկ ստացած եւ ոչ մի փոքր վէրք:

Վերջին հեռագիր մը կըսէ թէ մարդասպանը ձերբակալուեր է եւ կը կոչուի Մանուէլ Տուրօ, բայց թէ այս

եւ թէ Մաթէօ Մօնթանօ կեղծ անուններ ըլլալ կերեւին:

Ռօպէր Համիլթօն անուն Անգլիացի մալ ձերբակալուեր է իրեւ ռճրին հեղինակ, սակայն Անգլիական դեսպանին պահանջմամբ ազատ արձակուեր է:

Բոլոր եկեղեցեաց մէջ գոհարանական աղօթքներ կերգուին արքայական ամուլին մեծ վտանգէ մը ազատելուն համար: Անթիւ ուրախակցական հեռագիրներ հաս Մատրիա կը հասնին վեհապետներէ եւ բարձրաստիճան անձնաւորութիւններէ:

ԺԱՌԱՆԳՈՒԹԵԱՆ ՄԸ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ընդհանրապէս չատերը, եւ անոնց հետ նաեւ մեր պարզամտ ազգայիններէն ոմանք այնպէս կը կարծեն թէ՛ անարշիստները որոշ նպատակի մը ծառայելով դրամը ոչինչ նշանակութիւն ունի իրենց համար եւ չկրնար չեղել զիրենք իրենց այն նպատակէն:

Հետեւեալ դէպքը, որ ոչ թէ շինծու՝ այլ ճշմարիտ եղելութիւն մըն է, եւ զոր մօտեւս կարդացինք բարեկան այլ եւ այլ թերթերու մէջ, բաւական պիտի ըլլայ ցոյց առաւ համար թէ որչափ սխալ են այն պարզամտներուն ունեցած կարծիքը անարշիստներու մասին, եւ թէ ասոնք ի՞նչ չուտ կը թողուն իրենց քարոզած ու հետեւած նպատակներին եւր բաղդին բերմամբ ստակի տէր դառնան: Ահա Եւրոպական թերթերու գրածները քաղելով պատմենք:

Էտուար Մօնկուսը անունով մարդ մը ծնած 1861 ի նոյեմբերի 27 ին, եւ կուրմօն—Սիւս—Ուազ գիւղաքաղաքին բնակիչներէն անարշիստ ըլլալուն ու երբեմն ալ գողութիւն ընելուն պատճառաւ քանիցս կը բանտարկուի թէ՛ Բարիլի մէջ եւ թէ՛ Վալիս:

Իւր մէկ բանտարկուած միջոցն, այն է եօթը տարի առաջ, իւր ծննդավայրն եղող կուրմօն—սիւս Ուազի նօտաւր Մարիուս անուն, Մօնկուսը փնտռել կուտայ աստ անդ, մի շատ տեղեր, բայց մէկէ մը չկրնար իմանալ ուր գտնուի, մեռած կամ ողջ ըլլալը: Նօտաւր լրագրաց մէջ ծանուցումներ գնել կուտայ, դաւձեալ չգտնուի եւ այսպէս կանցնի եօթը տարին:

Մօնկուսը որ ողջ էր, վերջին Ապրիլ ամսոյ մէջ Բարիլի Սէն—Մէտար փողոցը եղող գիշերային պատասպարա-

քին մարդ, ես քու արիւնդ մտած եմ, ես քու տան ճրագը մարդն եղած եմ... Գնա՛, կըսեմ, ու մի՛ նայիր հոգիս սեւութեան վրայ որ պատկերուած է կերպարանքս գարշութեան մէջ... Ախ, զա՛րկ, սպաննէ՛ զիս... մատնի՛՛ ըսէ՛ ինծի, որովհետեւ աստուծոյ սեղանին հանդէպ եղբոր խոստովանութիւնը վալիին յայտնեցի... Այս սարսափ բանտագուշանքը չանթի մը պէս գլխուս իջաւ ու ես կարծեցի թէ տունը կը ըլլէր վրաս: Ետեւտով մը գուրս նետուեցայ ու ըսի ինքնիրեւ. — Դուն ալ քու պատիժ գտած ես... Ի՞նչ ընեմ: Ու երդում ըրի որ մէկու մը չիմացունեմ: Եկեղեցականը մ'ոռնաւ: Նոյն տարին դաւակն քաղաքին վարժարանէն ելաւ ու գիւղը վարժապետ կարգուեցաւ: Առանց անոր յայտնելու պարտք ունենալս, ամեն ատեն թեր—հաշիւներ կընէի ու տոկոսը միայն կը վճարէի: 1883 ին

նը կերթայ կը պառկի : Հոն ինչպէս կըլլայ Մօնկրօնյի գլխաւոր թղթերը պատասխարանի տեսչին ձեռքը կանցնին, տեսուչը այն թղթերէն կը հասկնայ թէ Մօնկրօնյը բարձրագոյն մէջ, անմիջապէս թուղթերը թաղին ոտակարանին կը յանձնէ . եւ որովհետեւ թղթերուն մէջ, նորահաս ուսմանը շինութեան «բանախնդրութեան» գծագրութիւններ, եւ պայթուցիկ հեղանակներու բաղադրութեան կերպերը սորվեցնող տեղեկութիւններ կային, ուստի կանոնաւորօրէն անմիջապէս Մօնկրօնյը իբր ամենավերտանգաւոր մէկը կը բռնէ կը բանտարկէ :

Մօնկրօնյը քիչ օր յետոյ կը դատապարտուի եւ Ռիւնտիսի բանտը կը փոխադրուի հոն իր պատժոյ օրիւր անցնելու համար :

Մօնկրօնյի դատը լրագրներու մէջ հրատարակուելով՝ եօթը տարի առաջ գինքը փնտռող կուսման-սիւն Ուազի նօտարը կը կարգայ եւ կիմանայ վերջապէս իր երկար առին փնտռած մարդուն ուր ըլլալը : Իսկոյն կը գրէ Սերգեյու թեան պաշտօնատունը յայտնելով որ եթէ այն դատապարտուած մարդը իր փնտռած էտուար Մօնկրօնյը ըսուածն է. ժառանգած է 150.000 ֆր եւ այս գումարը իբր աւանդ իր քով կեցած է :

Մնացեալ տեղեկութիւնները ահա ինչպէս կուտայ Թաւ լրագիրը :

Ներկայ Մայիս ամսոյ եօթն եւ տասն երրորդ օրը Ռիւնտիսի բանտին վերադառնալու կ'նշուի տուաւ իր առաջը բանտարկեալն Մօնկրօնյը եւ անոր ըսաւ .

— Դուն այն էտուար Մօնկրօնյը ըսուածն եմ, որ կուսման-Սիւն-Ուազ ծնած է 1861 թ Նոյեմբերին 27 ին :

Մարդը դէմք մ'ունէր որ ժամանակէ առաջ ծերացած գործաւորի կոչու ու հիւսած գէմքի կը նմանէր : Իր դառն աչքերը կամաց կամաց վեր վերցնելով պատահականեց :

— Դուք լաւ գիտէք որ ես բանտարկեալ Մօնկրօնյն եմ եւ տեսարաններն ուղի մէջ ալ արձանագրած էք զիս :

— Այո, այս, շարունակեց Տեսուչը ձեռքը շարժելով . . . Անտրիսթին ես, այնպէս չէ՞ :

— Ես Մօնկրօնյը ըսուած բանտարկեալն եմ պատահականեց մարդը կասկածոտ եղանակաւ, եւ երեք ամիս պիտի մնամ հոս : Ըսածս ըսեալովս է :

— Վերջապէս, դուն ես ուսման շինել ուզողը :

— Միթէ՞ դուք ինծի երկրորդ անգամ դատելու ելեր էք հարցուց մարդը :

Եթէ զիս ազատելու համար է, այդ ուրիշ :

— Ո՛չ, բայց ըսելիքս չատ տարօրինակ բան է . . . ժառանգութեան մը տէր եղար գիտե՞ս :

— Իրա՞ւ, ըսաւ մարդը անտարբերութեամբ . ես արդէն ուրիշ անգամ ալ ժառանգած եմ :

— Բարդաւոր ես ուրիշն :

— Իո՞ցէ, իմ եղբայրս գաղթաբայրերէն մէկուն մէջ մեռեր էր : Երբ զիս կանչեցին ու գացի տնորթոցս ժառանգութիւնն առնելու, երեք ժամ սպասել տուին ինծի, յետոյ տուածին ինչ եղաւ . . . — 17 ֆր. 50 սանգիմ եւ նիքէյ ժամացոյց մը :

— Հոգ մընէր . այս անգամ քիչ'ը աւելի է :

— Հարկը ֆրանք կա՞յ :

— Ոչ քիչ մը աւելի :

— Էյ հազար ֆրանք :

— Ոչ . գործը չատ զարմանալի է : Երբ դատապարտուեցար, անունդ լրագրաց մէջ անցողին . ասով կուսման-Սիւն-Ուազի նօտարը իմացաւ ուր ըլլալդ . դիմեց ու հարկն է որ գիտնայ թէ իր փնտռած մարդը զո՞ւն ես : Դու արդի ժառանգութիւնդ հօրեղորորդիդ է ձգած է քեզ եօթը տարի առաջ :

— Ո՛հ ես ասդին անդին ուր որ կրնայի կերթալի, ո՞ր պիտի գտնէին ինծի . . . բայց ըսէք տեսնեմ ոչնչա՞մ է ժառանգութիւնս :

— Էյ մեծ բան մը չէ, հարկը յիշուի հազար ֆրանք մը կայ, մէկ ալ ամաւրանոց տուն մը :

Մօնկրօնյը մունջ կեցաւ վայրկեան մը, երկար չունջ մը առաւ եւ խոր ձայնով մը աղաղակեց .

— Կեցցէ՛ անարշին :

— Լո՛ւ, ըսաւ բանտին տեսուչը .

— Ես ամեն բանէ առաջ ուզեցի իմ երախտագիտութիւնս յայտնել անարշիտական վարդապետութեան : Եօթը տարուան մէջ երկու երեք անգամ ֆրանսիայի չորս կողմը դարձայ . գործարանէ գործարան մտայ ապրուստի համար : Այո՛ ապրեցայ, բայց չան պէս քաղցած : Վերջը վրէժս առնել ուզեցի մարդոցմէ : Հազիւ ընկեցնեցէս մէկը ինձ սորվեցոց . ու մը շինելու որ ձերբակալեցի՛ զիս անարշիսթ ես ըսելով : Եթէ չընենք էի անարշիստութեանս հօմար՝ նօտարը ինչպէս պիտի իմանար անունս :

Բանտին վերադառնալու խառնուրդ տուաւ որ այնուհետեւ չունենայ այն անպիտան գաղափարները :

Մօնկրօնյը որ զգաստանալու խոստում ըրած էր, իր յանցանաց չնորհու՛մ

ստացաւ, բանտէն ելած տեսնե՛ ժառանգութիւնն ստանալով գործի մը փակ էնելու դիտարարութեամբ :

Մօնկրօնյը յետոյն Բարիկի ճամբան բռնեց ուրախ գումարով սրտով, եւ Բարիկ հասնելուն հետեւեալ օրը գնաց ուղղակի գտնել նօտարը, գինքը ճանչցուց եւ ժառանգութիւնն ստանալով միտքը դրաւ հեռու տեղ մը անձանթի՛ լայց հանգիստ ու խաղաղ տպիւր, այլ եւս ոչ մի յարաբերութիւն չուզելով ունենալ անարշիսթեցութեան հետ :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԻԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Անցեալ ապրիլի սկիզբներում, այն է Զատիկի հինգշաբթի օրը Պրօֆէսոր Մառ Պետերսը զգուշ կարգաց մի ուսերէն դասախօսութիւն «Անիի պատմութիւնը եւ պեղումներ այդ քաղաքի տեղում» վերնագրով : Զր նայած որ դա մի գիտնական նիւթ էր եւ դասախօսութիւնը երկար տեւեց (3 ժամից անելի) . ունկնդիրները փոռն ծափահարութիւններով վարձատրեցին յարգելի գիտնականին : Դասախօսութեան համար պատրաստուած էին մօտ 60 նկար՝ մագաղան լապտերներով ցոյց տալու համար : Որքան գիտեմք, առաջին անգամն է որ Շիրակի մայրաքաղաքը դասախօսութեան առարկայ է դառնում լրիւ գիտութեան նիւթեր մատակարարող մի հնագիտական թանգարան :

Պ. Մառն անխոնջ հօգուտարութեան մի արդիւնքն էլ այն է, որ այս տարի էլ Անիում կը շարունակէ իւր աշխատութիւնները ճարտարապետ Պ. Թորոս Թորոմանեանը, աւելի եւս հարստացնելով իր հիմնալի գործերի ժողովածուն : Հայկական անտարբերութիւնը քիչ էր մնում գլորէ այս անխոնջ, հմուտ աշխատաւորին յուսահատութեան անդունդը, բայց Պ. Մառը տեսաւ նրան, զնահատեց նրա արժանաւորութիւնը եւ ահա այսօր, Պ. Մառի ջանքերով, Պետերսը զիտութիւններ ակադեմիան իր հովանաւորութեան տակ է առել Պ. Թորոմանեանին, յատկացնելով նրա մի համեստ ամսական մինչեւ սպառնալի, իսկ ներանից յետոյ պիտի ցուցահանդէս կազմէ Պ. Թորոմանեանի նկարները, որոնք եւ պիտի ենթարկեն մասնագէտների գնահատութեան :

Երբ ես յիշում եմ իմ զինուորական զանազան մարդկանց՝ Պ. Թորոմանեան

նին ապահովելու համար, երբ յիշում եմ թէ ինչ ցրտութեան . . . բոլոր անտարբերութեան եւ նոյն իսկ նկատման . . . քիչ էի հանդիպում, չեմ կարողանում այսօր էլ չը յիշել, որ հայի պիտանի գործընկերը սովորական չէ, սովորական պիտի լինեն միշտ : Բարձր գիտնական հիմնարկութիւնը այս ողբալի գրութիւնը խփեց հայ ազգի ճակատին, խրախուսելով մի մարդու . որին չէին ուզում նոյն իսկ մասնագէտ ճանաչել մեղադրում :

Միշտ այս ցաւը մեզ հետ . . .

— Հայ երիտասարդ մի նկարիչ եւս Պ. Արշակ Ֆէթիսեան նոր հրատարակել է Անիի մի փոքրագիր . . . բայց գեղանկար այսօր : Բացի շատ գեղեցիկ երեսից, պարունակում է իր մէջ 15 գունաւոր տեսարաններ որոնք Պ. Ֆէթիսեանի վրձինի գործերն են եւ տպւած են Նիւրնպայում :

Մինչեւ այժմ Անին ներկայացնողները լուսանկարներն էին : Այժմ նկարիչն է տալիս Անիի տեսարանները իրանց գոյններով . օգուտ, լուսաւորութեամբ : Այսօր, որ հրատարակւած է շատ գեղեցիկ, հաստ ողբի թղթի վրայ անշուշտ գեղեցիկ զարդ կը լինի ամեն մէկի սեղանի համար : Շատ լաւ աշխույժ են մասնաւոր Անին հետոյ ից պարիսպները, Ապուղաւրեանի կեղեցիկ, Յ. Փրիկը, Հովուի եկեղեցին, Միջնաբերդի եկեղեցին, լուսաւորիչը, Դրզալան, Մաղսարբերդ :

«ՄԵՆ!»

Էջմիածնէն Մայիսի 11-ին կը հեռագրեն «ՄԵՆ»-ին .

«Երէկ, Մայիսի 10-ին, երեկոյան ժամը 7-ին կաթողիկոսը ստորագրեց մի կօնդակ, որով եկեղեցական սահմանադրութիւն է տրվում :

«Այս եկեղեցական սահմանադրութեան հրատարակման առթիւ այսօր պատարագեց յետոյ, որ մատուցվեց Ս. Իջման օգնանի առաջ, վանքի գաւթում կատարվեց հանդիսաւոր մաղթանք, ներկայութեամբ կաթողիկոսի, միաբանութեան եւ ժողովրդի խումբ թագմութեան : Ողբերգութիւնը ընդհանուր էր . եկեղեցական սահմանադրութիւնը ընդունվեց հիացմունքով : Կաթողիկոսը շնորհաւորեց ժողովուրդը, որ երկարատեւ կեցցէններով ողջունեց այնպարդ հայրապետին . թնդցին կ'ցցէ՛ Հայրիկ, ժողովուրդը եւ սահմանադրութիւնը » :



կինս մեռաւ ու ես աշխատելու ուժէն ինկայ : Երբ վաղեմեց Գարեթ Սկան մուրհակը չորս տարով եղած էր ու կը լրանար 1885 թին : Երբ Պայմանագրութեան լրացաւ, պարտաւորեցանք զաւկիս հետ փոխանակագրի վերածնել ու յիշուցնելով ոսկին երկուք ու կէս տարուան համար եօթանասունի բարձրացուցել : Այն, այն առին էր որ հայրըդ հազաւ վրայիս սեւ օձու շապիկն ու՛ չորս ամսուան մուսնացած՝ կ' : Պայիս մեկնեցաւ : Առաջին փոխանակագիրը՝ որ վեց ամսուան վրայ շինուած էր ու քան եւ հինգ ոսկիի գուժար մէն էր, կը զճարուի . երկրորդին ալ նորիցս գումար մը ըլլալով՝ դարձեալ կը հատուցուի . կը մնար քան ոսկի : Հոս գրիչս առաջ չնրթար որ շարունակեմ պատմութիւնս . . . ահա՛ մուծը կը պատէ աչքերս ու էտութիւնս կը ցնցուի : Կարծես թէ այսօրս թշուառութիւնը բուական չէր . . .

անողոր ճակատագիր մը զաւկիս ըսվանդակ կեանքը կը խորտակէ . . .

Անկից ետք՝ Երբ վաղեմեց Գարեթ Սկան իմ գէմս կիսէ ու գարեջրի ուրուականի մը պէս ակոսները կրճտելով վրայ կը ծախէ գերբաստանիս օձախը . . . ու փողոցը կը նետէ մայրը, քեզ ու զիս, Աղետալի տեսարան մը՝ գոր դուն չը պիտի մոռնաս ամբողջ կեանքիդ մէջ . . .

«Մ'ֆ . . . Վարսենի'կս, տարաբաղդ Վարսենի'կս, դուն աջքը բացի թէ չէ ինկած գերբաստան մը ու քանդուելու մօտ օձախ մը տեսար, որ կը մնար :

«Ու օր մըն ալ յանկարծ դուրս նետուեցար այդ ծխաշունչ աւերակիս մէջէն . . .

«Աւա՛ղ, թոռնի'կս, քու մեծ հայրդ ուրիշ բան չը թողուց քեզի՛ եթէ ոչ ողբալի հօրդ յիշատակը : «Ներէ՛, ա'խ, ներէ՛ ինծի . . .

«Ու ա'յն օրը, երբ կարգաս դուն այս կտագիրս, որ գերբաստանիք անկուսին սեւ պատմութիւնն է, ես արդէն շատուց ցուրտ հողին տակ նետուած եմ : Եկո՛ւր . . . բարի հրեշտակի մը պէս աղօթէ՛՛ այդ ցուրտ հողին վրայ ու արցունքի կաթիլ մը ցողէ՛՛ որ հանգչին սովորներս :

«Վարսենի'կս . . .

«Մահուան անողոր վայրկեանին է որ կը գրեմ այս տողերը ու կը վերջացունեմ ցուրտ փոսի մը մօտեցած :

«Աստուած պահէ՛՛ քեզ, թոռնի'կս :

«Աղօթէ՛՛ հօրդ հողի'ն համար . . .

Քու մեծ-հայրդ

Ինչս Մուրատ Կարիպեցի

Կարիպ Արապի ընթերցողն աւարտեց ու դա՛ն, աղերս'կ ու խոսկալայից մտածումի մը մէջ ինկաւ : Անոր նայուածքը վրէժալիցութեամբ մը լեցուեցաւ ու զգաց թէ կոկորդը կը ճգմունէր աներեւոյթ ձեռքի մը մէջ, ժա-

մերով ապառաժին կրթնած ու հեծկտանք խղած՝ սպասեց . յետոյ առաջ արագ գէպի քաղքին ճամբան ուղղուեցաւ, որ լեռան արեւմտեան թիկունքին վրայ կը գտնուէր ու ամենէն կտորուկ եւ կարճ միջոցն էր : Ո՛չ, բնա՛ւ կանգ չ'առաւ : Կարծես թէ մարդամեքենայ մը դարձած էր : Յօդնիլը, տառապիլը, ընկճուիլ չէր գիտեր . . . աւելի ճիշդն ըսելով՝ չէր զգար : Աջքը միմիայն նպատակի մը յառած՝ կը յառաջանար, առանց անոր ճամբուն վրայ եղած վտանգը նշմարելու : Կը քալե՛ր, այո՛, կը քալե՛ր՝ իր հօգուցն ընթանալով մղումով, կը քալե՛ր՝ իր էութեան գալարումներու տակ ու իր սրտին կրակէն վառուած վրձնակի մը մէջ . . . Ու երբեմն կը բացագանջւր ինքնիրեն . . .

— Անիծեալ . . . անիծեալ մարդ . . .

Բայց այսչափ միայն . . . կարծես թէ լեզուն յառաջ չէր երթար ու փղձկու՛մը խղղէր գինքը :

(Մնացեալը յաջորդով)

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԻՍ

Կ. Պոլսէն 18 ին քաջուած հե-
ռագիր մը կըսէ թէ՝ Բ. Դուռը
վերջնական կերպով պատուիրած
է Յունաց Պատրիարքարանին ,
որ 24 ժամուան մէջ Մանասթը-
րի յոյն Մետրապօլիտը պաշտօ-
նէն հանէ :

— Եւսէնի ապստամբութիւնը
երթալով մեծ ծաւալ կը գտնէ
և թրքական իշխանութիւնը վը-
տանգի մէջ կը ձգէ :

Ֆէյզի Փաշա անկարող գտնուե-
լով այս ապստամբութիւնը հիմ-
նովին զսպելու , միշտ օգնական
զօրաց առաքուած կը խնդրէ Բ.
Դուռէն :

Արաբիա շրջուած զօրքերը ալ
խեղճ վիճակի մէջ են , ո՛չ լաւ
զինեալ և ո՛չ լաւ մարզուած ,
ուստի զարմանք չէ եթէ գասա-
լիք կըլլան ու ապստամբաց կը
միանան :

— Մարզուանի և Կեսարիոյ Թա-
լաս գիւղի մէջ կառավարութիւ-
նը անտեղի և անհիմն պատրու-
ակներով շատ մը Հայեր ձերբա-
կալած բանտ նետած է :

ՍՊԱՆԻԱ

Սպանիոյ Ալֆոնս ԺԳ Թագաւո-
րին և Անգղիական Էնա իշխա-
նուհոյ ամուսնութիւնը տեղի ու-
նեցաւ մայիս 18 ին Մատրիտի
մէջ :

Արքայական Թափօրը պալատէն
մեկնեցաւ առաւօտեան ժամ 9 ը
25 անցած , իսկ Էնա իշխանուհին
մի ժամ յետոյ մեկնեցաւ ծովա-
յին նախարարութեան ապարան-
քէն եկեղեցի երթալու համար :
Ճամբու վրայ խռնուած անթիւ
բազմութիւն մը մեծ խանդավա-
ռութեամբ և կեցցէներով իր
համակրութիւնը քայտնեց Թագա-
ւորին և իշխանուհիին անցած
ատեն :

Թագաւորը ընդունելով Էնա
իշխանուհին Ս. Կերոնիմոսի եկե-
ղեցւոյ դուռը ներս տարաւ և ի-
րեն քով նստեցուց հոյակապ ամպ.
հովանիի մը ներքեւ գրուած ար-
քայական գահուն վրայ :

Պսակի արարողութիւնը կա-
տարուելով Կարդինալ Սանքա
օրհնեց արքայական ամուրը , յոր-
մէ յետոյ ամուսնութեան սովո-
րական թուղթերը ստորագրուե-
ցան :

Եկեղեցիէն մեկնած պահուն
Թագաւորն ու Թագուհին ան-
նկարագրելի ուրախութեան ա-
շտակներով ծափահարուեցան
ժողովուրդին կողմէ :

Իսկ ճանապարհին պալատ դար-
ձած ատենին Արքայական կառ-
քին գէժ տունէ մը ռումբ նետու-
եցաւ , որոյ մասին առանձինն

գրած ենք լրագրոյս մէջ :

— Նորապսակ Թագուհին օժիտ
բերած է 750,000 ֆրանք , և Ալ-
ֆոնս ԺԳ անոր հարսանական նո-
ւէր բրած է 20,000 անգղիական
ոսկի բացի միլիօններ արծող դո-
հարեղէններէ :

ՆԵՐՔԻՆ

Սօֆիայէն մայիս 16 թուակա-
նաւ գրուած նամակ մը կը յայտ-
նէ թէ Թուրքիան Պուլկարիոյ
մերձեցման նոր քաղաքականու-
թիւն ձեռք առնելով , կը փա-
փաքի համաձայնութիւն մը՝ գո-
յացնել շուտով առկա եղած
խնդիրները երկու կողմանց նը-
պաստաւոր եղանակաւ լուծելու
համար :

Այս լուրը ստուգութեան կա-
րօտ է , վասնզի չենք կրնար դիւ-
րաւ հաւատ ընծայել բանի մը որ
շատ անգամ կրկնուած ու ան-
գործադրելի մնացած է : Մեր
կարծեօք մինչև Մակեդոնական
խնդիրը չկարգադրուի ու չվեր-
նայ մէջ տեղէն , Թուրքիոյ հետ
կատարեալ համաձայնութիւն մը
անկարելի է :

— Անցեալ հինգշաբթի օր Վառ-
նայի նաւահանգիստի բացման
արարողութեանց կատարուած
միջոցին , Ֆէրիտիանտ իշխանը
Ֆրանց Եօղէֆ կայսրէն շնորհա-
ւորական հեռագիր մը ստացեր
է , որով կայսրը Պուլկարիոյ վա-
ճառականութեան ապագայ բար-
գաւաճման համար բարեմաղթու-
թիւններ ըրեր է :

Իշխան Ֆէրիտիանտ՝ Աւստրո-
Հունգարիոյ վեհապետին՝ սոյն
փափկանկատողութենէն զգացու-
ած իւր շնորհակալութիւնները
իսկայն հեռագրով յայտներ է :

— Վառնայի նոր նաւահանգիս-
տին շինութիւնը տակէ տասն և
մէկ տարի առաջ 1895 ին ոկսաւ :
Այս թուականէն առաջ Վառնայի
նաւահանգիստը մտնող ապրա-
նաց քանակութիւնն էր 133,000
թօնօ 28 միլիօն ֆր. արծողու-
թեամբ :

Այս քանակութիւնը տարուէ
տարի աւելնալով տասը տարի
յետոյ այսինքն 1904 ին մտած
ապրանքներն էին 326,000 թօնօ
70 միլիօն ֆր. արծողութեամբ :

Նաւահանգիստը այն ձեւով շին-
ուած է , որ եթէ վերսիշխալ
համեմատութեամբ մտած ապրա-
նաց քանակութիւնը երթալով
աւելնայ և նաւահանգիստը նեղ
գալ խիստ դիւրաւ կարելի պի-
տի ըլլայ անոր բնդարձակումը :

ԹՂԹԱՏԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Թղթատարական Միութեան
Համաժողովը որ Հռոմի մէջ գու-

մարուած էր , իր գործողութիւն-
ները աւարտեց : Եղած գլխաւոր
որոշումներէն մին այն է , որ սո-
վորական նամակաց ծանրութիւ-
նը 15 կրարէն 20 ի բարձրացած
է , և այս վերջին ծանրութեամբ
նամակ մը առաջուան պէս 25
սանդիմ գնով պիտի խրկուի օ-
տար երկիր , իսկ յաջորդական ա-
մեն մէկ 20 կրամի համար պիտի
վճարուի 15 սանդիմ :

Պատկերազարդ քարգ բօսթալ-
ներու համար՝ Միութեան մաս-
նակցող ամեն օտար երկիրներ
համաձայնած են թոյլատրել , որ
թղթակցութիւնը՝ ատրէսի հա-
մար յատկացեալ կողմը կարենայ
գրուիլ այսուհետեւ :

Համաժողովը առկէ զատ ուրիշ
նորութիւն մալ որոշած է , այն
է « քուբօն-պատասխան » ըսուածը ,
որ տեսակ մը մանտա բօսթ է 25
սանդիմնոց , որով օտար երկիր
խրկուած նամակաց պատասխանը
կարելի պիտի ըլլայ առաջուց
վճարել :

ՄԻՍՏԵԱԼ ՆԱՀԱՆԳ

Ապրիլի մէջ 50,000 նոր գաղ-
թականներ մտեր են Ամերիկա
որոցմէ 30,000 ը Ռուսիայէն գա-
ցեր են : Իսկ նոյեմբերէ մինչև
Ապրիլի վերջը Ամերիկա մտնող
օտարականաց թիւը հասած է
526,955 հոգիի :

ՀԵՌՍՊԻՐՆԵՐ

Վարչաւա , 29 մայիս

Ոստիկանութեան քովսէր Գո-
վարքին սպաննուեցաւ փողոցի
մէջ :

Բեթերսպուրկ , 29 մայիս

Կայսերական ուքաղ մը ներկայ
1906 տարւոյ մէջ բանակի և նա-
ւատորմի զինուորական ծառա-
յութեան 469,718 մարդ առնուի-
լը կը հրամայէ :

Բուլթալիս , 30 մայիս

Այս գիշեր երկու ռումբ նետ-
ուեցան նախկին ընդհանուր կա-
ռավարիչ Ալիխանովին գէժ երբ
կառքով կայսրան կերթար ոճ-
րագործները փախան :

Վարչաւա , 28 Մայիս

Կէս օրին , խոյմը մը գինեալ
մարդիկ վարչաւիայի Արուեստա-
գոյժական հրամատունը մտան
կողոպտելու նպատակաւ :

Ասիկց կռիւ մը ծագեցաւ և
յիսունէ աւելի ռեվօլվերի հա-
րուած արձակուեցաւ :

Հատարականութեան մէջէն երկու
հոգի սպաննուեցան , գրամատան

պաշտօնեայներէն երեք հոգի և
ընկերներէն հինգը վիրաւորե-
ցան :

Յարձակողները փախան առանց
բան մը կարենալ առնելու :

ԱԶԴ

Տօքթ . Թորոսեան տեղափոխելով
իւր բնակարանը Ուլիցա Տօքթման ,
թիւ 58 , կրթական Տեսչի պաշտօնա-
տան վարի յարկը , պատիւ ունի ծա-
նոցանել յարգոյ հասարակութեան թէ
ինչպէս առաջ նոյնպէս եւ միշտ կըն-
դունի ամեն տեսակ հիւանդներ առա-
ւօտները ժամը 9-էն մինչեւ 11 . իսկ
կէսօրը վերջ 2-էն մինչեւ 4 ը :

Այս առթիւ Տօքթօրը կը խնդրէ նա-
եւ սմեռ անոնց՝ որոնք իւր աղքատ
ձրիաբար գործանուիլ կը փափաքին ,
հաճին այցելել իրեն միմիայն կիբա-
կի օրերը կէսօրէն ետքը 2-էն մինչեւ
4 ը :

ԱԶԴ

ԳՈՒՋՈՒԻ ՄԵՐՈՒՆԸ . Ժեյլաթին եւ անոր
համասեռ նիւթեր պատրաստելու կա-
րող կանանցէտ մը , փափաքողք դիմե-
լու ևն անձամբ կամ նամակաւ առ
Բիթր Նիքօլօֆ . ի Կապ ովա :

ՄՇԱԿ

Օրաթերթ քաղաքական , գրական
Բաժնեգիրը՝ Եւրոպայի համար 30 ֆր-
Ամերիկայի համար 6 տոլար , Պարսկաս-
տանի եւ Ռուսաստանի համար 10 րուպ-
լի տարեկան :
Հասցէ՝ Խմբագրութիւն «ՄՇԱԿ»
(Կովկաս) Թիֆլիս

«ՉԱՅՆ» ՀԱՅՐԵՆԵԱՑ

Այս մեծածաւալ չաչաթաթերթը յի-
ղափրակաւ ջղուտ յօդուածներ ,
քննադատականներ եւ ազգային ու
քաղաքական լուրեր կը պարունակէ .
Արտատահանի համար տարեկան
բաժնիգիրն է 12 ֆր. կանխիկ .
Հասցէն է՝

Արմենեան Բիւրոյի խիֆ քօ
Բ Օ. Պօքս 1731, Պօսթըն , Մաւ-
[Ամերիկա]

Կարելի է բաժանուր պարտուիլ նաեւ
Իրաւունքի խմբագրութեան միջոցաւ :

ԸՆՏԻՐ ՔԱՑԱՆ

Չուտ խաղողէ պատրաստուած բնա-
կան քացախի նորահաստատ մեր մթե-
րանոցը առիթ կընծայէ յարգոյ հասա-
րակութեան որ տակէ յետոյ գերմ մը-
նայ խաղախաւ այլ եւ այլ զեղերով
պատրաստուած կեղծ քացախներու վը-
նաներէն : Մեր քացախին անարատու-
թիւնը եւ ազդեութիւնը ամեն երաշ-
խիք կընծայէ իր սուղջութեան նա-
խանձ խնդիր յաճախողին . որ անգամ
մը փորձելով արդէն հաստատած պիտի
ըլլայ զերազանցութիւնը :

Դուրսէն մեծ քանակ յանձնարարու-
թիւնք փութով կը գործադրուին ի
հարկին նմոյշ զրկելով :

Հասցէ՝ ԱՐՄԵՆԱՆ ԳՈՍՍԱՊԵՆԱ
Դ. Թաղ փողոց Գօլօնի թիւ 65 ՎԱՍԻԼԱ

Удостоверение А. Курбатияна
всех пият а Д. Тодоровъ и С-не—Варна